ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏԱՆԵՐՈՒՄ — ՏԱՐԻ — ԹԻՒ — 686 — ՇԱԲԱԹ — 3 — ԱՊՐԻԼ 1865

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ԳԱՅՄԱՆՔ

Կ. Պոլսոյ ՀՄՐ. Տարեկան 180 ղրշ. Արծաթ
,, ,, Վեցամսեայ 100 ,, ,,
,, ,, Եռամսեայ 60 ,, ,,
Գաւառաց ՀՄՐ. Տարի 200 ,, ,,
,, ,, Վեցամսեայ 110 ,, ,,
Մէկ թիւը Մեծ թերթ 4 ,, ,,
,, Փոքր ,, 2 ,, ,,
Տանուցման տողը 2 դրուշ է։

ԳԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, եւ առ մեն ամսոյ 1ՀԵՆ. ամ 15ԵՆ կ'ակսի։
Դուրս գացած լրագրաց ճամբու ծախքը Խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ ճանակ կամ արեւ իցէ գրութիւն՝ Խմբագիր—Տնօրէն ՀԻՆ ԱՒՂՂՈՒԻ. եւ ճամբու ծախքն ալ դրկողին վրայ է։

ԱՍՊԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՍԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՏԵՂԵԱԿԱՆՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 3 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ Օ. Էնգլիական ժողովոյն կողմանէ Այսպէս մասուցուելիք Ուղերձին վերաբանութիւնն արդէն սկսած է. Շաբաթուս հատած գաղղիական լրագիրները՝ Պ. Լէմիլ Օլիվիէի, Պ. Թիէրի, Պ. Թիւիլիէի և Պ. Ժիւլ Ֆաւրի ատենաբանութիւնները կը բերեն մեզ. Շատ երկայն կըլլայ այս ատենաբանից հետեւելով՝ մի առ մի անոնց պաշտպանած սկզբունքները բացատրել, ուստի համառօտ տեսութեամբ մը միայն բաւականանալով՝ մեր ժամանակագրի պարտաւորութիւնը կը կատարենք. Պ. Լ. Օլիվիէ, որ առաջ կառավարութեան հակառակորդ մասին մէջ էր, անցեալ տարուընէ 'ի վեր իր հակառակութիւնը խիստ մեղմացուց, և ըսողներ ալ եղան թէ միջակ կոչուելիս մը կազմելու հակամէտ եղաւ այն սկզբունքով, որ առանց ստատիկ կերպով կառավարութեան դէմ մաքառելու՝ անոր կազմութեան մէջ աւելի ազատական պայմաններ մտցուցնելու աշխատի. Ասոր համար իր ատենաբանութեան մէջ կառավարութեան վայ վատահութիւն յայտնելով՝ ծանոյց թէ ժամանակ է որ մամլոյ ազատութեան հետ ուրիշ կարեւոր ազատութիւններն ալ տրուին. Իսկ Պ. Թիէր կոյսեր ատենաբանութեան այն խօսքը ձեռք առնելով, որուն մէջ ըսած էր թէ՝ «յաւաջադիմութիւնը չէ «թէ քիչ շատ հանձարաւոր դրու«թեան մը գործադրութիւնն է, այլ «ժամանակէն նուիրագործուած և հա«սարակաց կարծիքէն ընդունուած փոր«ձերու արդեանց գործադրութիւնն «է,» հելքեց և ցոյց տուաւ թէ հակառակորդ մասին ուզած ազատութիւնները «երապայոյս ցնորք» կամ «քիչ շատ հանձարաւոր» դրութիւններ չեն, այլ նոյն իսկ Եւրոպայի ամէն կողմերն ընդհանրացած դրութիւն մը. Պ. Թիւիլիէ պատասխան տալով կառավարութիւնը պաշտպանեց. Գաղղիա, ըսաւ, խորհրդարանին պատասխանատու պաշտօնակալաց ձեւ օք կառավարուող թագաւոր մը չուզեր, որ անուամբ միայն թագաւորէ, այլ անիկա այնպիսի կայսր մը կուզէ, որ երկրին գործերը անօրինելու, տէրութեան ատենից նախագահելու և բանակաց հրամանատարութիւնն ընելու կարող ըլլայ. Պահանջուած ազատութիւններն ալ կայսրը բոլորը շնորհած է, յարեց Պ. Թիւիլիէ, բայց 'ի այն ազատութիւններէն որք ժողովուրդը կառավարութեան դէմ կը հանեն.

Այս ընդհանուր վերաբանութիւնը գոյուելէն վերջը, Ուղերձին մասնաւոր վերաբանութիւնն սկսաւ, որոյ առաջին յօդուածին մէջ հետեւեալ փոփոխութիւնն առաջարկած էր ընդդիմադիր մասը.

«Ազատութիւնը միայն ժողովրդոյ ոգին կը փափաքցնէ, որովհետեւ անիկա միայն մարդիկ մարդ կընէ, անիկա միայն արուեստ ազգեցութիւն և 'ի ներքուստ ներդաշնակութիւն և երջանկութիւն կուտայ. Յետոյ կը խնդրեն որ 1789 ին Գաղղիոյ ձեռք բերած ազատութիւնները 1865 ին ալ իրենք չզլացուին, փոխանակ զի, կըսեն, աշխարհս ազատութեան դաս տալէ ետեւ՝ Գաղղիա ինչպէ՞ս կրնայ ինքն անկից զլուռիլ.

Այս յօդուածին վրայ երկարելն Ժիւլ Ֆաւրի խօսք ուղղած ըլլալով, իր չափազանց ազատասիրական ատենաբանութիւնը Այսպէս դէմ ամբաստանութիւն մը համարեցին ոմանք և ժողովին մէջ բաւական յուզմունք եղաւ. Բերը հետեւեալ թուով այս նիւթիս վրայ նորէն կը խօսինք.

Հռոմի խնդիրը Գաղղիոյ ծերակուտին վիճաբանութեանց առթիւ պահ մը կարեւորութիւն ստանալէ ետեւ՝ դարձեալ անտարբերութեան մէջ մնաց, թէ և ապաժամանակներ ալ պակաս չեն, որոց սրտին վրայ ծանր նստած ըլլալով Պ. Ռուլանի և Պ. Պոնժանի ատենաբանութիւնները, անոնց ազդեցութիւնը մեղմացնելու և անդրադարձութիւնն արդարացնելու նպատակաւ տակաւին բաւական թուղթ կը մրոտեն. Բայց ասոնց կընեցնել ուզած գաղափարներն ինչպէս հոս, այնպէս ալ արեւմտեան Եւրոպայի մէջ լրջամիտ հասարակութեան ծիծաղը կը շարժեն, վասն զի իրենց պահանջումներն իրենց պաշտպանել ուզած փասին տկարութեանն անկասկածելի նշաններն են. Իրաց այս վիճակին մէջ գաղղիական Տէպա լրագիրը հաւանութիւն ցոյց տուած էր որ եթէ Ս. Պապը Հռոմէն փոխուելու հարկադրի, կընայ ըլլալ որ Անգղիոյ մէջ ապաստանարան խնդրէ. Ուստի Հատարակայ խորհրդարանին մէջ Պ. Նիւտէկէթի հարցուց թէ արդեօք Անգղիոյ կառավարութիւնն ալ պատշաճ կը դատէ՞ այն ապաստանարանը տալ Ս. Պապին, եթէ հարկ ըլլար. Բայց եթէ չենք սխալիր, Պ. Նիւտէկէթի այս հարցումն ալ անդրարդարդրականութեան աչքին նուազ մեղադրելի դէպցուցմէ մը յառաջ կուգար, որ Հատարակայ խորհրդարանը ծաղուքիքով ընդունեց, և արդարև քաղաքագէտ անձինք մոլեռանդութեան դէմ հենդնական ծիծաղէ զատ ուրիշ բան չեին կրնար ցոյց տալ. Լորտ Ռալմերսթըն ալ իր պատասխանին մէջ երգիծարանութիւն չնայեց, և յայտարարութիւն ըրաւ թէ Ս. Պապին Անգղիա ապաստանիլը քաղաքականապէս մեծ անտեղութիւն մ'է, բայց Անգղիա ըսաւ, երկու տարի առաջ իր Հռոմի դեսպանին ձեռօք ծանուցած էր Ս. Պապին, որ եթէ պարագաներ ընտիպեն՝ կրնայ Մալթա ապաստանել.

Իտալիան լրագիրները Մածծինիի մեկ նամակը հրատարակեցին, որուն մէջ կը ծանուցանէր թէ գաղտնի դաշնադրութեամբ մը Բիսմարքէն Գաղղիոյ որոշած է. բայց թէ՛ Իտալիոյ և թէ՛ Գաղղիոյ կէս պաշտօնական լրագիրները սուտ հանեցին ասիկա. Ուրիշներն ալ լուր մը տարածեցին թէ Ալեքսոր Լամարթինէ թագաւորն հրաժարական պիտի տայ, ուստի այս գիտուորութենէն ետ դարձնելու համար Նարօլէոն կայսրը հրաւիրած է, ըսին. զինքը որ տեսակցութիւն մ'ընեն 'ի Լիոն. Այս շինծու լուրերուն հեղինակները կղերականք և յեղափոխականք կը կարծուին.

Գերմանիայէն եկած լուրերն Լուպէյի դքսութեանց խնդիրը նոր կերպարանքի մը ներքեւ կը մոցընեն. Բրունսիոյ պաշտօնէից նախագահ Պ. Տը Գիլմարք ամէն ջանք 'ի գործ կը դնէ որ թէև Աւկուսթենպուրկի դքսին իշխանութիւնը ճանչցուի, բայց և այնպէս Շլեզվիկ-Հոլշթէյնը Բրունսիոյ պաշտպանութեան ներքեւ ըլլայ, և ժողովուրդք ալ Բրունսիոյ թագաւորին հրապարակութեան երդում ընեն. Սակայն Ֆրանքֆորթի դերմանական Ազգաժողովը՝ Պավիէրայի առաջարկութիւնն ընդունելով՝ Աւկուսթենպուրկի դքսին գահակալութիւնը հրատարակեր է, և Աւսարիա ալ Բրունսիոյ դէմ քուէ տուեր է. Կայնք ուրեմն թէ ասոր վրայ Պ. Տը Գիլմարք ինչ ընթացք պիտի բռնէ. Պէրլինի երեսփոխանաց ժողովն իր՞ աննկուն ընդդիմութիւնը կը շարունակէ, առ ոչինչ գրելով կառավարութեան պաշտօնէից ըրած ըսպառնալիքը, որք կը հասկըցնեն որ եթէ չպիշնանի, թագաւորը պիտի ստիպուի ժողովը լուծելու. Աւստրիոյ երեսփոխանաց ժողովն ալ հաշուեցուցի (պիւտժէ) խնդիրը կարգի դնելէն ետեւ պիտի գոցուի, և գաւառական Աւստրիոյ ազգաժողովները պիտի բացուին.

Այս վերջնոյ հետ պիտի բացուին նաև այս տարի Ռէշթի և Ակրամի աւստրիական ազգաժողովները, որով Հունգարիա և Խուսաթիա ալ Աւստրիոյ սահմանադրական շրջանակին մէջ կը մտնեն.

Յունաստանի գործերը գոհացուցիչ ընթացք հետի են դարձեալ, և Աթէնքի մէջ կառավարութեան պաշտօնէից դէմ խօսքեր կը պարսին եղեր, որպէս թէ հասարակաց գանձը սնանկութեան հասուցած են. Մայրաքաղաքիս Լէվանթ Հերալտ լրագրին թղթակիցն, ուրիշ այս լուրը կատնուք, կը ծանուցանէ նաև թէ Գէորգ թագաւորը, ոչ ինչպէս յայտնի է՝ Տանիմարքայի թագաւորն որդին ընլլալով բողոքական դաւանութեան մէջ ծնած է, իր նոր հարեւնեաց աւելի հարազատ ընլլալու համար, դիտաւորութիւն ունի եղեր որ քիչ ատենէն յունական դաւանութիւնն ընդունի. Յուսալի է ուրեմն որ սուրբ տակառին գօրութեամբը Գէորգ Է. առաւել ևս իր հպատակաց համակրութիւնը կը վայելէ և Յունաստան ալ կը հանդարտի. Բայց եթէ անդրեսական լրագրին գրուած տեղեկութիւնն սուտ է, յունաց թագաւորն այն ատեն Ռուսիոյ Կոստանդին Մեծ դքսին դասեր՝ Օլգա իշխանուհւոյն հետ պիտի ամուսնանայ, որն որ դեռ շատ փոքր է եղեր, թէև Վ. Դէորգ Է. ալ շատ մեծ չէ.

Մերիկայի վերջին լուրերն արդէն չորեքշաբթի օրը մեր ընթերցողաց հաղորդեցինք. Անոնցմէ ետեւ եկած ուրիշ հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ Կրանթի բանակն ընդհանուր շարժումմ'ըրեր է դէպ 'ի յառաջ. Հաւանայինք Կրէյվէլ Ռիմա ըսուած տեղը շատ զօրութիւն ունին եղեր և մեծ պատերազմ մը կ'սպասուի. Հաշուութեան լուրերը չեն հանատուած. Մօպիլի ամրոցին մէջ ալ վեց ամիս պաշարման դիմանալու պաշար կայ եղեր.

Հետեւեալ թղթաբերն աւելի կարեւոր լուրեր պիտի բերէ, որոց վրայ այժմէն գուշակութիւն ընել հարկ չենք համարիր. Լրագիրներն ընդհանրապէս հարաւին գիշերամն հաւատի կը հանարին, բայց 'ի անանցեալ օրք հարաւայնոց կուսակիցներ կեցած են պատերազմին սկիզբէն 'ի վեր. Ասով ըսել չենք ուզեր թէ հարաւայինք բոլորովին ձեռնընկրկած եղած են պատերազմէն, բայց հիւսիսայնոց զօրքերը զանոնք չորս կողմէն շրջապատած ըլլալով, եթէ Ռիչմընտն առնուն, ալ այնու հետեւ հարաւայնոց զօրութիւնը կոտրած է. Պ. Տէվիս ալ ասիկայ լաւ հասկընալով հարաւայնոց ծերակուտին ծանուցեր է թէ Ռիչմընտ մեծ վտանգի մէջէ, բայց կը յուսայ որ քաջութիւնը կընայ ամէն վտանգ հեռացընել, և կը խնդրէ որ Ապէս Թրոբրուս ըսուած օրէնքը, որուն զօրութեամբ ամէն ամրաստանեալ քաղաքացի կընայ երաշխաւոր տալով քանդը չերթալ, առ ժամանակեայ կերպով դադրի. Ասոնք յուսահատ միջոցներ են որ վերջապէս օգուտ չեն ըներ, և Պ. Դ. Տավիս իրեն քաղաքացեաց ազատութիւնը վերցընելով զանոնք բանի չիր ալ պատերազմելու, թէև պէտք է խոստովանիլ որ Պ. Լինքօլն ալ իրմէ շատ առաջ Ապէս Թրոբրուսի օրէնքը դադրեցուցեր է առ ժամանակեայ կերպով. Ա. աշխարհի մէջ ալ Պ. Լինքօլն ժողովրական ամրոխի մ'առջև ճառ մը խօսեր է, որուն մէջ կը հաստատէ թէ պատերազմը վերջանալու մօտ է.

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կէդրոնական մնուկի գանձապահ մեծապատիւ Մոմճեան Մկրտիչ աղան, ինչպէս որ յայտնի է, նախորդ Քաղ. ժողովին օրով Տնտեսական խորհրդոյ անդամոց մէկուն կողմէն ամբաստանութեան ներքև ընկած ըլլալուն, այն ժամանակ այս ամբաստանութեանց քննութիւնը Տնտեսական խորհրդոյ յանձնուելէն ետեւ՝ ըստ որում այնուհետեւ Տնտեսական խորհուրդին և Սեւմոյ հոգաբարձութեան մէջ իրաւասութեան խնդիրներ ծագեցան և Տնտեսական խորհուրդին նիստերը անբաւական վիճակի մէջ և Մոմճեանի խնդիրը կախ ձգեցին, արդի Քաղ. ժողովը Յանձնաժողով մը կազմեց և այս գործին քննութիւնը անոր յանձնեց. Այս Յանձնաժողովը իր քննութիւնը շարունակելու ատեն, Տնտեսական խորհուրդն իր ամբողջութիւնը գտաւ և պաշտօնը փարել սկսաւ. Ասոր վրայ Քաղ. ժողովը դարձեալ խնդիրը Տնտեսական խորհուրդին դարձուց, քանի որ անոր իրաւասութեան կը վերաբերէր այն. Տնտեսական խորհուրդը՝ յատկապէս սահմանուած քաղաքական ժողովոյ և Սեւմոյ հոգաբարձութեան քանի մը անդամց խորհրդակցութեամբը՝ թէ ատ աջուց եղած և թէ եաբէն Յանձնաժողովին ըրած քննութեանց արդիւնքը աչքէ անցնելով՝ այս անգամ իր տեղեկագիրը մատոյց Քաղ. ժողովին. Ըստ այնմ արժան գտաւ ուրեմն 'ի պաշտօնէ յայտնել հասարակութեան թէ գանձապահ Մոմճեան Մկրտիչ աղայի տումարակալութիւնը, որուն կկրպը թէ և սնկանան՝ բնաւ խարդախութիւն մը արտայայտած չէ. թէ անոր դէմ եղած ամբաստանութիւններն անտեղի և անհիմն են. թէ անոր հաշուեսուս մարները ժամանակին գոնու ողջ ժողովականներուն փաստերացեալ չէին միայն. թէ այն կանոնաւոր և փաստերացեալ տումարակալութեան օրինակը՝ որ Սահմանադրութենէն առաջ Ազգ. ժողովներուն և խորհուրդներուն և ոչ մէկուն մէջ տեսնուած բան չէ, անիրաւութիւն է պահանջել մինակ գանձապահ Մոմճեան Մկրտիչ աղայի տումարներուն մէջ. և թէ վերջապէս գանձապահ Մկրտիչ աղան իր պաշտօնը շարունակ ամենայն հաւատարմութեամբ կատարած է, և թէ նա բոլորովին անպարտ է և անմեղ.

30 մարտ 1865

Ի Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս

Ինչպէս որ կը տեսնուի վերոգրեալ ծանուցումէն, Մոմճեանի գործին քննութիւնը վերջապէս զինքն անպարտ հանած է. և չենք յուսար որ անոր անխոնջ մ'առանը՝ Պ. Պէկեան՝ Ազգային վարչութեան այս վերջն ալ կողմնակցութեամբ տրուած համարելու հարձակի. Թէպէտ կը ցաւինք որ այս խնդրոյն լուծումն այսչափ երկարեցաւ, բայց առաւել ևս կը ցաւինք որ Պ. Պէկեան, իբրև Տնտեսական խորհրդոյ ատենապետ, իր միւս պաշտօնակիցներն ալ իբրև իրեն համակարծիք ցուցընելով՝ այնչափ ատեն լրագիրներն իր անիրաւ ամբաստանութեանց դարձուցեր է. Ուրիշ վերջապէս արդարութիւնն ալ վաղ կամ անագան պիտի յայտնուէր.

Ինչպէս արդէն ծանուցինք՝ Օրագիրն արդի խմբագիրը 4 օր բանտարկուելէ ետեւ ազատուեր է. Ազատութեան մէջ, ուր սիրելի է մեզ հասարակութեան մէջ աւելի ազատամտական սկզբունք մտած տեսնել, օրագրի մը դէմ երեւան եկած այս տարաձայնութիւնն մը, գրամանք կը պատճառէր. բայց կանխակալ դատաստան մը չընելու համար, յետագայ տեղեկութեանց սպասել հարկ համարած էինք. Արդ եթէ մեր առած տեղեկութիւնն տարդ են, Օրագրի միակ յանցանքն այն եղած կըլլայ որ մամուռ ոգ պարահանդէս մը իրրև հասարակաց ներկայացրեր է. Ուրեմն, պէտք էր որ պարահանդիսին անօրէնները առաջ պատասխան մը գրէին, Օրագրի խմբագրին, որ ըստ լրագրական օրէնքաց պարտաւոր էր իր թերթին մէջ հրատարակելու. Հապա ասով միայն պիտի գոհ ըլլային իրենք. իսկ երբ Օրագիրն իրենց նամակը հրատարակել չուզեր, դատն այն ատեն բանալու էին.

Որովհետեւ Ազգային վայ խօսք բացինք, թող ներուի մեզ որ քանի մը դիտողութիւններ ալ խաչկաչնեալ գործին վրայ ընենք. Մեկի գլուռած նամակ մը կը բողոքէ թէ թագական խորհուրդը՝ խաչկաչներուն ծախքը հասարակութեան աչքին քիչ գոց տալու համար՝ իր տեղեկագրին մէջ միայն 234 հազար գրուշ անցուցած է. Մինչդեռ, կըսէ, ասկից զատ 85 հազար գրուշ ալ անցեալ տարի ծախք եղած է, և ասկից ետեւ ըլլալիք ծախքն ալ հաշուելով՝ գումարը 400 հազարի կը հասնի. Բայց թագական խորհուրդն իր օրով եղած ծախքը միայն գրած է, ուստի հին և ապագայ ծախքերն ալ իր հաշուեցոյցին մէջ անցուցած չըլլալուն համար չկրնար մեղադրուիլ.

Մեւս կողմանէ, ուրիշ նամակներ ալ ծախքերը կը նուազցընեն, և ալեւոր տուած հաշիւները չափազանց ցոյց տալով, իրենք ալ բոլոր ծախքը 3000 ոսկիէն աւելի չեն հաշուիր. Ասոնց որն ալ սայդ եղած ըլլայ, մեր կարծիքն այս է թէ Ազգին ներկայ վիճակին նայելով, մինչդեռ թագական խորհուրդն ալ իր տեղեկագրին մէջ աւելի կարեւոր ուսումնական և ընկերական դպրոցական պիտոյքներ ցոյց տուած է, առ առաւելն 1000 ոսկիով լմննալիք չենքի մը վրայ այսչափ ծախք ընելը խոհեմութիւն չէր. և ասոր պատասխանատուութիւնն անոնց վրայ կիյնայ, որք նախ այնչափ մեծագումար ծախսուց դուռ բանալով՝ դժուարին գործ մը ձգեր են նորակազմ թագական խորհրդին, եւ է սայդ է որ իր ընորութիւնէն առաջ ամէն բան որոշուած, տնօրինուած և շինութիւնն ալ սկըսուած ըլլալով, միայն շարունակութիւնը ու աւարտումն իրեն մնացած էր.

Ակէն մեզ ուղղուած նամակ մը գատնապէս կը գանգատի թէ Սահմանադրութեան հրահանգին համեմատ երեք ամսէ 'ի վեր քաղաքին մէջ եղող թագական խորհուրդ ընտրուեր է, բայց դպրոցները դարձեալ իրենց առջեւ ապարդիւն վիճակին մէջ մնացեր են, ուր հաշիւ քերականութեան դասատուութիւն կըլլայ, և այն ալ լոկ անուամբ. Ուստի նամակագրին խօսքին նայելով, թագական խորհուրդները փոյթ չունին դպրոցներն աւելի բարեկարգ և արդիւնաւոր վիճակի մը մէջ դնելու, ինչպէս որ պարտականութիւն ունին ըստ Սահմանադրութեան. Իսկ ազգկանց կը-

թեան համար գոյություն բանալ՝ մաքրելն իսկ չանցնիր եղեր։

Սամսոնի իր գանգատի նամակն ամբողջ հրատարակել խնդրած է, բայց խիստ երկար ըլլալն՝ չերբանք կամ մանուկ չունենալնք հրատարակել, յուսալով որ այս քանի մը տողերը բաւական են Աբինայ Գերը Ս. առաջնորդին և թաղականությունը ու շարունակությունը գրաւելու, որպէս զի Սահմանադրության իրենց վրայ դրած պարտականությունները խղճի մտքը և ազատական անձնական իրաւունքներ կատարելու։ Գիտնալով որ մեր ժողովուրդն այս օրուան օրա ամեն բանի աւելի կրթության կարիքն ունի, և սով միայն կընայ լաւագոյն վիճակի մը հասնիլ։

Լենոն–Գարուի նախարդ թաղական խորհուրդն իր քառամսեայ մասակարարությունն ամենայ հանրությունը հաշուեկշիռն հրատարակած ըլլալով, թաղին բնակիչներն հետաքրքիր ընդհանուր հաշուեկշռությունը ուզելիքը զգած են մեզ հրատարակելու։

Այնպէս որ ամեն հանրօգուտ անձինք և ընկերություններ, նմանապես ալ ազգի մը բարեկամ և ազգասէր ժողովներ ու խորհուրդներ հրապարակական շնորհակալության արժանի լինելուն համար, այս անգամ պարտք կը համարինք մեր ամենի երախտագիտական զգացմունքներս յայտնել Եկեղի Գաբուի Դարեկին Թաղ. խորհրդին, որ ամենայնիւ Ազգ. Սահմանադրության համեմատ ընթացք մը ունենալով՝ աս օրերս պարզելու իր չորս տարուան հաշուեցույցը հրատարակած է։

Ինչպէս որ անկարելի է Թաղական խորհուրդը թէ և հանդերձագիր, իշխանիկ և ազգասաց համար նուէրներ դոյանալիք գումարը զոնած է, սակայն տակաւին շնորհիւ իր օրինաւոր չարժման՝ չէ թէ միայն թաղիս եկեղեցւոյն և գպրոցին ծախքերը կատարելապէս բերի է, այլ նաև 40000 դուրուշ դարձեան աղջկանց վարժարանին ալ 2 000 դուրուշի չափնպաստ բերի է, և ամենէն դարմանալին այս է որ գրեթէ 45,000 դուրուշն ալ աւելի աւելցուցեր ու թաղենպաստաւոր ձեռնարկությանց դրած է։

Ահա արդարև որքան որ գոհացուցիչ է և միխիթարական ամեն ճշմարիտ ազգասիրաց համար, նոյնքան ալ ընդհանուր ազգին շնորհակալությունը արժանի է, և միանգամայն այս իրողությունը մեծ ու զօրաւոր ապացոյց մ'է Ազգ. Սահմանադրության օրինաւոր անձանց ձեռքով ընկերք օգուտներուն։

Նոր Թաղական խորհուրդն մեր շնորհակալությունը յայտնելիս ետեւ, կը յուսանք որ արդի Թաղական խորհուրդն այնպիսի օրինակ մը հետեւի։ Իրազգին, նուէրաւ տանց նման ստորություններն այլ ևս ձեռք չառնելով՝ հարկ եղածը ի գործ կը դնէ ժամայաջ Թաղական արդյունաւորելու գործը յառաջ տանելու։ (որուն արդէն թէ և ձեռնամուխ եղած էր նախկին Թաղական խորհուրդը, սակայն անձնական բանաւոր պատճառներով իր հրաժարականը տալու պարտաւորելուն համար չկրցաւ գլուխ հանել) որն որ թաղիս համար ամենէն առաջին կարեւոր ձեռնարկությունն է։

Մնամք ու այն։

(Ստորագրություն)։

Գալաթիա 31 մարտ 1865։

խմբագիր։

Ձեր ազգասէր և պատուական լրագրին էջերին ազգային միխիթարական լուրերը միշտ բաց ըլլալուն համար, կաղաչեմք ձեր յարգության որ այս անգամ մեր սա հեռաւոր ուղերձին անկիւնն ալ չհեռանար՝ ընելու բարեհաճիք։ Ահա հինգ տարի է որ մայրաքաղաքիս մէջ Հայասատանցի խումբ մը պանդուխտ աղդայինք։ Գալատիոյ Ամենասրբի վարժարանը կաչակերտելու կիրակի օրերը ձրիարար Անձնանուէր ընկերության հնարելու, և ընտանիքիս Հայրենեաց մէջ չմատ և անմոխիթ թողուցած մեր օրական ապրուստին հետ խնայողություն ունենալ լուսաւորելու կաշխատինք։ բարեբաղդաբար այս առաքինական դործին թիկունք եղողներ և օգնություն մատակարարողներ խիստ շատ ըլլալուն համար, հնար կրնար դտացած բերկրությունիս զրադիլ, մանաւանդ յուժարությամբ կը յայտնեմք, որ ասոնց մէջն ալ Հայկական բազմարդիւն ընկերությունն է, որ անցեալ չարթու մամուլին նոր եկած Քերականության օրինակներէն Անձնանուէր աչակերտաց Սանուց ընկերությանս երեք հարիւր օրինակ նուիրեց։ Մեծապատիւ տէր, ատ ընկերության ազգօգուտ նպատակը և արդիւնաւոր գործը մեր ապիկար լեզուին և տկար գրչին գործը չէ պատմել։ ուստի ձեր համարձակ գրչին և աղատախօս լեզուն կը յանձնենք։

Մնամք ու այն։

Ատենապետ Ատենադպիր Դրամատար

Գ–բրիել Յ–ովհան Սահակ Մանուկեան Թորոս Սարգիս

Բ–ուլէնտ։ Սէբաստացի։ Աբրահամ Սեբաստացի։

Ց Գ. Երկու աղդասէր անձերէ յիշեալ քերականությունէն 22 հատ ու մէկ առձեռն բառարան ընդունեցինք ձեռաբռ մեծապատիւ Յակոբ աղա Յովհաննէսեանի, որ յատկապէս նուիրած է Սեբաստիոյ Անձ. Սանուց ընկերության կիրակի դպրոցին։ և մեծապատիւ տպագրատան Ռուբէն աղա Քիւրքճեանը 200 հատնոր քերական շնորհեց։ և մեծապատիւ Արամ Ճանիկ աղան 100 հատ Փարիզի քերական, և Միքայէլեան Սիմոն աղան նորատիպ Աչխարհագրությունէն 50 հատ։ և բարերար անձ մը 375 հատ բառքալի խորհրդածություն, նմանապես ազդասէր մ'ալ բանդակի մշակություն 500 հատ, և Խորասանճեան Աբիքսան աղան 1864 և 1865 տարուան բազմալեզուներ։ և Յամանակ օրագրոյն արդդ. խմբագիր Փափազեան Սահման աղան 10 տետակ հայ օրագրության ամբողջ տարեկանները։ և ուրանց ալ չարունակությունները և այլ բազմաթիւ քերթեր կան։ և ուրիշ նուէրներ՝ գրանք ընկերությունս այս ներկայ տարուս մէջ ընդուներ է տարեկարձի հաշուեցույցի միջոցաւ հրատարակելու ժամանակին թաղով այժմէն մեր խորին շնորհակալությունը ամենեցուն ալ կը նուիրենք՝ ի գիտաց համայն աշակերտելոց։

Անձնանուէր ընկերության ազգօգուտ նպատակն արդէն ամենուն ծանօթ ըլլալով, անոր յառաջադիմությունը նպաստող վերոյիշեալ արդդ անձանց ոգեւոր գովեստ և շնորհակալություն տանք՝ քիչ են, ըստ որում ի լինից տուած նուէրներդ՝ դասատրաթենէ զուրկ մնացող և հիմն հաղիւ անոր մէկ թերթ ճաշակն առնող աղքատ ազգայնոց մատուցական պիտոյքը լցունելու կը ծառայեն, որն որ մարմնական պիտոյք լցունելէ ոչինչ նուազ կարեւոր և ազնիւ գործ մ'է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ներկությամբ սրտի կը ծանուցանենք թէ Հայազգի ճարտար բժշկաց ցանկը նոր անունով մ'ալ ճոխացաւ։

Մեծարգոյ Տոքթոր Մ. Աբասեան՝ որ Կ. Պոլսոյ բժշկական դպրոցին մէջ իր ուսմունքն աւարտելէ ետեւ՝ առաւել ևս զայն կատարելագործելու համար տակաւին չորս տարի առաջ Փարիզ գացած էր, իր նպատակին յաջողությամբ հասնելով՝ Գալատիոյ բժշկական ճեմարանէն ալ փառաւոր վկայագիր մ'ստացած՝ անցեալ կիրակի օրը Կ. Պոլիս հասաւ։

— Անցեալ հինգշաբթի օրը յաւելի արիած մը պատահեցաւ Պարտիզպանեան մեծապատիւ Աբեղիս աղային, բարեբաղդաբար առանց ծանր հետեւանաց։

Կատաղի Բանկալթիի փողոցէն դացած ժամանակ, զօրանոցին առջև ձին խրտնեցաւ և կառավարը վախնալով ելբատանիները ձեռքէն թողուց։ Աբեղիս աղան ալ կառքէն դուրս ցատկելուվերով՝ քարերուն վրայ ինկաւ, երեսը վիրաւորեցաւ և ինքն ալ մարեցաւ։

Իսկոյն զօրանոցին վիրաբույժները վազեցին, և գովելի փութով մը զայն զօրանոցը փոխադրելով՝ պէտք եղած դարմանները ըրին։ Քանի մը ժամ ետքը Աբեղիս աղային խելքը դլուխը գալով, կառքը մը դրուեցաւ ու իր տունը տարուեցաւ, ուր բան արժանացին կը դտնուի, և բերկրությամբ կիմանանք թէ օր քան զօր առողջանալու վրայ է։

— Մայրաքաղաքիս մէջ սեղանաւորություն ընող Մանուկ աղա Սամսոլոնեան՝ Վեսարայի պատուաւոր հայ ազգի մը անցեալ շաբթուան վերջերն անցայտ ըլլալով, կասկած կրլար թէ թերևս գործերը ձախորդ երթալով՝ փախեր կամ երեսը պահեր է։ Բայց կիրակի օրը Իսկիւտարի Պալատան անուն նաւամատույցին առջև խզդուած մարդու մը մարմին գտնուելով՝ յիշեալ Մանուկ աղան ըլլան ատ գուշեցաւ։

Այս անձնասպանության պատճառը ոմանք գործերուն ձախորդ երթալը ոմանք ալ դժբաղդ սիրահարություն մը կը համարին։

— Ուսիոյ լրագիրներն անցեալները ծանուցեր էին թէ Սիպէրիայի մէջ տարափոխիկ հիւանդություն մը երևան ելեր՝ բազմաթիւ զոհեր կրնէ։

Այս շաբթու Պ. Լենոյի թղթաբերը լուր բերաւ թէ յիշեալ հիւանդությունը դժբաղդ սրաբ ժամանակ է եղեր՝ որ Սիպէրիայի Շանէվ նահանգին մէջ երևան ելեր և հեռագրերէ զարհուրելի կերպով Ռուսիոյ կառավարությունը բժիշկներ ղրկեր է յիշեալ նահանգը, բայց ամենն ալ մեռեր են։ վերջապէս կոտորածն այնպէս սատակացեր է, որ Շանէվի նահանգը քանի մը շաբաթի մէջ անմարդացեր է։

Պ. երջին լուրերը կը ծանուցանեն թէ Ռեդրսպուրգի մէջ ալ նոյն զարհուրելի հիւանդությունն երևան ելեր է, և արդէն Ռուսպուրգի հիւանդանոցին մէջ ոչ հիւանդ մնացեր է, ոչ հիւանդապահ, ոչ սպասաւոր, և ոչ բժիշկ։ դրեթէ ամենն ալ մեռեր են։

Ռուսիոյ կառավարությունը Գերմանիայէն, Գերմանիայէն ու Անդլիայէն ճարտար բժիշկներ խնդրեր է որպէս զի անոնց կարծիքն ու խորհուրդն առնու։

ԴՐԱՄԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Կ. Պոլիս 2 ապրիլ։

Մեր անցեալ տեսությունէն՝ ի վեր Հունաստանները մեծ փոփոխություն մը չիրեցին և գործողություններն հանդարտ եղան, որովհետև հասարակությունը խոհեմությամբ կ'ապասէ որ արժէթղթոց փոփոխության ստոյգ պայմանները իմացուին։

Աղիսկիներուն վիճակահանությունն սկսաւ, և մայիս ամսոյն հատուցանելի վեցամսեայ դիւրավճարն ու շահը 63 250 000 դուրուշի կը հասնի։ 1ն 2դ և 3դ անդամ ելած Հունաստանցիներուն մարտ 13 ին հատուցանելի շահին և և դիւրավճարին երկու երրորդ մասն արդէն վճարուեր է և մնացածն ալ վճարուելու վրայ է։

Լէվնթ–Էրբլը լրագիրը կը ծանուցանէ թէ վասմ։ Պարս էֆենտիին Օսմանեան պանքային հետ ընելիք բանակցությունները յաջող վախճան մը պիտի ունենան։ Պանքային այս տեղի ընդհանուր տնօրէն Պ. որ Ռէջ մարքիզը վաղուան Մարտիոյ շոգենաւով կապասուի, և Փարիզի ու Լոնտրայի մասնաժողովներն արդէն պատրաստուած են վասմ։ Պարս էֆենտիին բանակցությունները հաճութեամբ ընդունելու։

Աղեքսանդրիոյ Ծովու թղթակցին և Ռնկ. ըսուած տունը, որ բոլոր Աբեղեցոյ մէջ մեծ փոկ ստացած էր, իր վճարումները դադրեցուցեր է, ուստի անոր հետ բանվարի շահագրգիռ թեան մասնակցող ուրիշ տուներու ալ մեծ ճնաս կը դպչի։ Կրսուի նաև թէ Լոնտրայի մեծ տուներէն մ'ալ, որ Աբեղեցոյ հետ բանվարի գործողություն կունի, նմանապես իր վճարումները դադրեցուցեր է։

Թարմդեն մէջ հեռեւալը կը կարդանք։

«Անցեալ թղթաբերով Մերիկայէն եկած լուրերուն մէջ քանի մը բաներ կան՝ որ բանվարին դիմը հատատ մնալուն նպաստաւոր կը սեպնենք, բան որում, ոչ և է պարագայի մէջ և նոյն իսկ, ենթադրելով թէ շուտով հաշտություն մ'ըլլայ, հարաւին մէջ գործուած աւերումը շատ ուշ պիտի ձգէ վերսին բանվարի մշակության ձեռք առնելն ու շարունակելը։ Բայց ենթադրելով թէ հարաւայինք տակաւին յարատևեն, և իրենց երկրին ներսերը քաշուելով՝ պատերազմը դեռ ժամանակ մ'երկարնցնեն, այն ատեն գերմանները թիւը պակասելով, բանվարի հունձքն ալ կը նուազի։ Արևելեան կողմանէ հիւսիսայինք Սաւանայի մէջ գտած բանվարին՝ առանց որոշ ստոյգ ուղածքն ըլլալը նայելու՝ գրաւած ըլլալով, ասիկայ ոչ թէ միայն պատճառ պիտի ըլլայ որ հարաւայինք այլ ևս բանվարի չչշանեն, այլ ունեցածներն ալ ոչնչացընեն, որպէս զի իրենց թշնամեաց ձեռքը չանցնի։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՐՄԱՒԵՆԻ

ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄԱՐԵՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԴԱՅԻՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ՅԵԳԻՊՏՈՍ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Պ. ԱԲՐԱՀԱՄԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Մարդկային խմաստությանց և գիտությանց վաղեմի որանին մէջ՝ ուր բաւական թուով հայագրեր կան, և ուր նիւթական բարբաւաճմանց գեղեցիկ տեսարանի մը քով բարոյական և մտաւորական անշարժությունը տխուր հակապատկեր մը կը ներկայացընէր, բերկրությամբ կողջունենք մամլոյ հաստատությունը, և մեր անկեղծ խնդակցությունը կը յայտնենք՝ թէ Գեր. Տ. Ամկրտիչ արքեպիսկոպոսին՝ որ ա. ուաջարկող և կամ մանաւանդ հիմնադիր եղած է այս ազգօգուտ ձեռնարկությանն, և թէ արդդ Պ. Ա. Մուրատեանի, որ ազգին մտաւորական մշակությանը ծառայելու, արդարություն սէր ու միսթանությունքարոզելու գովելի նպատակաւ միայն ա. ուած է իր վայ խմբագրությունը։ Այս ոգւով և նպատակաւ ձեռնարկությունն մը քաջալերության արժանի է։

Արմաւենին ամիսը երկու անգամ կը հրատարակուի։ Տարեկան գինն է Եգիպտոսի համար 50 դուրուշ եգիպտահանդրամով, իսկ Եգիպտոսէն դուրս 15 ֆրանք, ճանրու ծախքէ ազատ։

Սորագրության տեղն է Կ. Պոլիս Գիլիկիա լրագրին գրասենեակը՝ ի Օշինճիրլի խան։

ԳՐԱՏՈՒՆ Ց. ՄԱԳԱՐԵԱՆ

Ի Կ. ՊՈԼԻՍ

Մէրձան չարչը-էօրիւ չը քարաղխան թիւ 4։

ՀԱՅՐ ԱՒ ՄԷԿ ԳԻՐՔԵՐՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՐԿԱՏՈՐ ՄԵԾԱԴԻՐ ՔԱՌԱՏԱՂ

Գործոյս հատորները եօթնական տետրե պիտի բաղկանան, ամեն մէկ տետրը տասնական թերթ պարունակելով՝ որ ամսե ամիս տետր առ տետր պիտի հրատարակուին շարունակ։

Տետր առ տետր գնողը պիտի վճարէ՝ հատին 3 ֆրանք 40 սանթիմ կամ 15 դուրուշ մէճիտիյէ դրամ։

Ամբողջ գործոյն ստորագրողները պիտի վճարէ (տետրը 2 ֆրանք 50 սանթիմի հաշուով), 14 տետրին կամ երկու հատորին 35 ֆրանք կամ 154 դուրուշ մէճիտիյէ դրամ։

Գործոյս ստորագրությունը լրանալէն յետոյ, բուն ստորագրության մէջ գտնուած պատկերներէն զատ 24 հատ ալ գեղեցիկ պատկերներ պիտի տրուին ամեն ստորագրողաց։

Այս գործս ապահովցընելու համար Յ. Ա. ստորագրությունն կը բանամ։ Որովհետև գործս երկու հատոր օրինակ վաճառուելու կը կարօտի, և եթէ երկու հատոր օրինակ չվաճառուի՝ պիտի դադրի, ուստի ով որ ուզէ ամբողջ տետրակներուն գինը կանխիկ վճարել՝ հետևեալ պայմանաւ կընդունիմ և պատասխանատուությունը վրաս կառնում։ Այսինքն ստորագրեալ անձինք երբոր տեսնեն թէ չորրորդ թերթին հրատարակությունն տեսնն անցած ու գործը դադրած է, այն ատեն մեր գրասենեակն գան և 40 ֆրանք 20 սանթիմ երկք տետրերուն գինը տեսնելով՝ մնացորդ 24 ֆրանք 80 սանթիմը տանին ընդունին անմիջապես։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պէյքոզի կայսերական Տէպոպաղանէին համար Անատոլու կեօնիւ և Պալըք եազը պէտք ըլլալով, ասոնց ապուրը՝ ի գործ պիտի դրուի ապրիլ ամսոյն (ըստ հին տումարի) 15ին հինգշաբթին օրը ժամը 6ին։ ուստի անոնք որ տալու յանձնառու ըլլալ կուզեն, կը հրաւիրուին նոյն օրը պատերազմական գործոց պաշտօնատան մէջ Տարը Շ. ուրայի կոմիսիոն գտնուիլ։

29 մարտ 1865

Ի Դուռն Պարտապետի

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԴՐԱՄՈՑ ԱՐԺԵՔԻ ԻՆԸ

Կ. ՊՈԼԻՍ 3 ԱՊՐԻԼ

	Բ. 29	Գ. 30	Դ. 31	Հ. 1	Ուր. 2	Շաբ. 3
	Լիր.	Լիր.	Լիր.	Լիր.	Լիր.	Լիր.
Օսմանական Մէճ.	102	102	101-10		102-20	102-20
Բանկոյ արժեթղ.						
Թարով Միւմթազէ	67-13	67-5	67-15		67-30	67-30
Խոնտը Ճէմաաէ Հէնտ.	58-13	58-5	58-35		58-20	58-20
« « Նոր	58-7	58	58-30		58-15	58-15
Աղիպիէ ստակով	60-13	60-5	60-35		60-30	60-3
« խոսքով						

ԱՐՄՏԻՔ

ԿՈՍՖԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ԱՊՐԻԼ

Յոհան Թալզան	—18	Յարին Բուլղիլի	—20
» Գանուբ	—	Եգիպտացորեն Դանրի	13—
» Սուլտան	—	Գարի Բուլղիլի	8—
« Գանուբ կակղ.	19—18		

ՄԵՏԱՔՍ

(ԻՓԼԻՔ)

Բրուսա կարմ Թէֆէ	520—530	» Սարսամ »	60—
« Գրկան »	550—540	» Խարասալ »	—48
« խոզալ չար	—	» Պարսկան »	60—
Շաբթի հոլման ֆրանք	62—	» Երմարդ »	52—

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

		Դուրուշ
Բամպակ Պայրքեսէր	հօխայ	9—9-20
» Կէյվէ	»	10—11
» Սամսոն	»	—10
» Բուրդիլի	»	—
Բուրդ Էնգիլիսի լուացված	»	—15
» » չլուացված	»	— 8
» Պայրքեսէր չլուաց.	»	— 8
Ճէյրի Էնգիլիս	»	—10
» Թոխատ	»	— 9
» Զորում	»	— 8
Մազը սեւ	»	20—23
» հերմակ	»	16—18
Թիֆթիք Էնգիլիսի	»	36—
Աֆիոն Պայրքեսէր	»	220—
Քիլիմ Տերսի բանուած	»	20—23
Մալէպ Տանկատանի	»	14—16
Մէղրամամ գեղին Տրապիզոն	»	—26
» » » Սեբաստիա	»	—24
Սուսամ Բուրդիլի	»	—3-20
Կոստանդի Հունտա Բուրդիլի Քիլէ		—35
» » Պանտրմա	»	—36
Զէյթ Ալյանդ	հօխայ	— 8
» Կիրիտ	»	— 7-20
Աճառ (Սապոն) Դամասկոս	»	— 6
» » Միտիլլի	»	— 5
Բրինձ Եգիպտոս Բէյճիա	»	— 3-30
» Տիմիատ	»	—

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

		Դուրուշ
Խանվէ Ռիսա եւ Դաֆնա	100 հօխան	—1000
» Մասթիկ	» »	—
Շաքար գլուխ 6-10 լա. կնդ.	»	—
» փոշի (թոզ)	» »	—255
» Հոլ գլուխ	» »	—270
» փոշի	» »	—228
» Գազդ գլուխ	» »	—260
» փոշի	» »	—223
Անագ (գալայ)	» »	—675
Գազիզ (սիսկիւռ)	հօխայ	— 6
Լեզակ (չիվիտ) Պէնկալա	»	—150
» » Մասրան	»	—140
Անուշադր (Նըշասդը)	»	— 6-20
Պղպատ (Զէյլիք)	ճնտուկ	—190
Կապար (Գուրշուն)	»	— 3-10
Թիմեղ (Թէնէքէ) զոյդ ճնտ.	»	—320
Զինք տախտակ թիւ 7—12	հիլ	— 5
Երկաթ Անգ. ճոզաձեւ	կնդ.	65— 66
» Բեւեռցու	»	72— 74
» Տախտակ 1—14	»	100—110
» Բոյորակ	»	140—145
» Դուսոյ	»	120—130
Բարֆիմա Վարիլ	39 հիլ	— 95
Խաթիւսէնէ ճէն. զոյդ	Մնտ	—260
» Պէյճ.	»	—240
» Թրիէսթ	»	— 95
Սբասանչէլի վէնտա	հօխան	— 15
» Թրիէստ եւ Գաղդ.	»	— 13

Ամ լրագիրը շաբաթն երկու անգամ կելլի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը։ Իսկ որ կուզէ կրնայ ստորագրուիլ, Կ. Պոլիս Զինիլի խանը լրագրոյս գրասենեակը։ Իսկ դուրսերը նոր գաբարձուներն են՝

ԻԶՄԻՐ. Խաչատուր աղա Ց. Զարիեան.
ԵԳԻՊՏՈՍ. Պօղոս էֆենտի Կարապետեան.
ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. Մանտեսի Սուքիաս աղա Գալուստեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Պ. Խաչատուր Էլմասեան.
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան.
ԱՏԱՆԱ. Նարարեր աղա Շանպազեան.
ՀԱԼԷՊ. Դիկոդոյան աղա Տէր Մարգարեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Պ. Տ. Մուրատեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Սարգիս աղա Գիրազեան.
ՎԱՆ. Դրիգոր Աղա Խաճանեան.
ԵՐԶՆԿԱ. Ընիերցասիրաց Թանգարան։
ԱՏԱԲԱԶԱՐ. Մանուսեի Յակոբ աղա Ց. Գրիգորեան.

Ուրիշ բաղաքներէ ստորագրուիլ ուզողները՝ այս տեղերեն մեկուն հետ կրնան դրպակցիլ։

Խմբագիր-ցնօրէն

Կ. Ս. ԻԹԻԽԱՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Կ. ՊՕԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ